ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4095-Ա «22» նոյեմբերի 2022 թ.

ԲԱՑԱՐԿԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Հայկ Հարությունյանի կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ Դ-95195-22 դիմումի հիման վրա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների համաձայն՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին և 21-ին հրավիրվել և անցկացվել են լսումներ, որին ներկայացել են վարույթի մասնակից՝ բողոքաբեր Հայկ Հարությունյանը, վերջինիս ներկայացուցիչ Վարդուհի Աբրահամյանը, վարույթին մասնակից դարձված անձ՝ «Ռատկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Մնացականյանը, վերջինիս ներկայացուցիչ՝ Էմիլ Ամիրխանյանը:

2022 թվականի նոյեմբերի 21-ին հրավիրված լսումների ընթացքում Հայկ Հարությունյանի կողմից գրավոր բացարկ է հայտնվել Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետին հասցեագրված 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ Դ-95195-22 դիմումով Հայկ Հարությունյանը խնդրել է վերացնել ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փողոցի հ.6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու նպատակով, Երևանի քաղաքապետի կողմից «Ռատկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 24.08.2022 թվականին տրված թիվ 01/18-Դ-10859-1421 շինարարության թույլտվությունը:

Հայկ Հարությունյանի կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ Դ-95195-22 դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի նոյեմբերի 21-ին հրավիրված լսումների ընթացքում Հայկ Հարությունյանը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածի «ա» և «դ»

կետերը, գրավոր բացարկ է հայտնել Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին, ինչը, ըստ էության, պատճառաբանել է նրանով, որ Երևանի քաղաքապետը նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը՝ տրամադրել և ստորագրել է շինարարության թույլտվությունը:

3.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Երևանի ավագանին նույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով ընտրում է Երևանի քաղաքապետին:

«Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա՝

ա) վարույթի մասնակից է.

բ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է.

գ) աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ.

դ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է՝ զավակը, ծնողը, հարազատ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քույրը կամ նրանց զավակը, հորեղբայրը կամ հորաքույրը կամ նրանց զավակը, մորեղբայրը կամ մորաքույրը կամ նրանց զավակը, ամուսինը (ընդ որում, ամուսնալուծության փաստը սույն կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ), փեսան, հարսը, ամուսնու ծնողները կամ նրանց զավակը կամ եղբայրը կամ քույրն է.

ե) նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:

«Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե առկա է նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

Վարչական վարույթի մասնակիցների կազմը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան բացարկ հայտնելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:

Բացարկի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է այն պաշտոնատար անձի անմիջական ղեկավարը, ում նկատմամբ բացարկ է հայտնվել, իսկ կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացվելու դեպքում՝ համապատասխան կոլեգիալ մարմինը՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ դեպքում քվեարկությանը չի մասնակցում կոլեգիալ կազմի այն անդամը, ում դեմ բացարկ է հայտնվել:

Հայկ Հարությունյանի կողմից Երևանի քաղաքապետին հայտնած բացարկը քննելու և որոշում կայացնելու իրավասու պաշտոնատար անձ է հանդիսանում Երևանի քաղաքապետը, քանի որ Երևանի քաղաքապետը, որպես ընտրովի տեղական ինքնակառավարման մարմին, «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության իմաստով անմիջական ղեկավար չունի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունած վարչական մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ կամ արդարացված շահ ունեցող ցանկացած անձի դիմումի հիման վրա անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Երևանի քաղաքապետին Հայկ Հարությունյանի կողմից հայտնած բացարկը հիմնազուրկ է և չպատճառաբանված, քանի Երևանի քաղաքապետը հանդիսանում է այն պաշտոնատար անձը, ով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասի, նույն օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով իրավասու է քննել իր կողմից կայացված վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայկ Հարությունյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 21-ին թիվ Դ-95195-22 դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթով Երևանի քաղաքապետին հայտնած բացարկը մերժել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092